evocaBANK

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ

Կոդ PRI17-0001-45 PUB	Խմբագրություն 03
Կազմեց	Հաստատված
Ներդրումային ծառայությունների բաժին	Վարչության 11/02/2026թ.թիվ 05_01 արձանագրությամբ
Կիրառման ոլորտ	Ներդրումային ծառայությունների բաժին
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում	Ներդրումային ծառայությունների բաժին
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	17/02/2026թ.
Վերանայման վերջնաժամկետ	17/02/2027թ.
Ուժը կորցնելու ամսաթիվ	

1. Նպատակը

Սույն Ընթացակարգը սահմանում է Բանկի հաճախորդների կողմից արժեթղթերով գործարքներ կնքելու նպատակով Բանկ ներկայացված պատվերների հնարավոր լավագույն պայմաններով կատարման կարգը:

2. Սահմանումներ և հապավումներ

- **Բանկ** - ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ:
- **Ընթացակարգ** - Արժեթղթերով գործարքներ կնքելու նպատակով պատվերների ընդունման և կատարման ընթացակարգ:
- **Պատվեր** - Բանկի հաճախորդների կողմից արժեթղթերով գործարքներ կնքելու նպատակով Բանկ ներկայացված պատվեր:

3. Ընդհանուր դրույթներ

3.1. Բանկը կատարում է Հաճախորդների կողմից ներկայացված Պատվերները համաձայն սույն Ընթացակարգի դրույթների, ինչպես նաև ըստ դրանց ներկայացման հերթականության, եթե տվյալ Հաճախորդի կողմից չեն ներկայացվել գործարքի կատարման առանձնահատուկ ցուցումներ:

3.2. Բանկը կատարում է Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերը համաձայն առանձնահատուկ ցուցումների, եթե այդպիսիք ներկայացվել են վերջինիս կողմից, անգամ եթե Պատվերի կատարման հետևանքով Բանկի կողմից չի ապահովվի Պատվերի կատարման լավագույն արդյունք:

3.3. Պատվերների հիման վրա գործարքներ կնքելիս Բանկը դիտարկում է՝

3.3.1. Հաճախորդի դասակարգումը, որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ ներդրող,

3.3.2. Պատվերի բնույթը,

3.3.3. Պատվերում նշված արժեթղթերի բնութագրիչները (դասը և այլն),

3.3.4. Գործարքի կնքման վայրի առանձնահատկությունները:

4. Պատվերների կատարում

4.1. Բանկի կողմից Պատվերների հիման վրա գործարքները կնքվում են՝

4.1.1. Բանկի կողմից՝ ֆոնդային բորսայում համապատասխան հայտ ներկայացնելու միջոցով,

4.1.2. երրորդ անձանց (Բանկի գործընկերների) կողմից՝ արտասահմանյան շուկաներում կնքվող գործարքների համար ներկայացված Պատվերները վերջիններիս հաղորդելու միջոցով:

4.2. Գործարքի կնքման լավագույն տարբերակն ընտրելու համար Բանկը դիտարկում է՝

4.2.1. Գործարքի կատարման արագությունը և հավանականությունը. ելնելով գնի և ծավալների տատանողականության մակարդակներից՝ Բանկն ընտրում է Հաճախորդների Պատվերների կատարման հնարավոր ամենաարագ տարբերակը,

4.2.2. Լավագույն գնի և հնարավոր նվազագույն ծախսերի ընտրություն. Հաճախորդների կողմից ներկայացված Պատվերները կատարվում են հաշվի առնելով տվյալ Պատվերների առարկա հանդիսացող արժեթղթի՝ Բանկի գործընկեր հանդիսացող ընկերությունների կողմից առաջարկվող նվազագույն գին և հնարավոր նվազագույն միջնորդավճար պարունակող առաջարկը,

4.2.3. Իրացվելիություն. Պատվերների կատարումը երրորդ անձին ուղղելուց Բանկն ընտրում է ամենաբարձր իրացվելիությունն ապահովող գործընկերոջը,

4.2.4. Պատվերի կատարման որակը. Բանկի համապատասխան աշխատակիցները տարբեր շուկաներում կատարում են ամենօրյա ուսումնասիրություններ և Պատվերը երրորդ անձին ուղղելուց ընտրում են Պատվերի ճշգրիտ, հուսալի և անմիջապես (կախված հանձնարարականի տեսակից) կատարման ճանապարհը:

4.2.5. Հաճախորդի հատուկ ցուցումներ. Բանկը պարտավոր է կատարել Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերներն առնվազն Հանձնարարականում ներկայացված պայմաններով: Հետևաբար, եթե Հաճախորդը ներկայացնում է Պատվերի կատարման հատուկ ցուցումներ, որոնք շեղվում են 4.2.1.-4.2.4. կետերի դրույթներից, Հաճախորդը պարտավոր է հստակ նշել գործարքի կատարման իր կողմից նախընտրելի տարբերակը: Համարվում է, որ Բանկը ձեռնարկել է բոլոր խելամիտ քայլերը Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով Պատվերը կատարելու համար, եթե կատարել է Պատվերը կամ Պատվերի որևէ առանձնահատուկ պայման՝ հետևելով Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներին:

4.3. Բանկի կողմից ստանձնվող Պատվերի լավագույնս կատարման պարտավորությունը ներառում է ոչ միայն գնային, այլ նաև այլ գործոններ, մասնավորապես՝ հնարավոր ծախսերը, գործարքի արագությունը և

հավանականությունը: Նշված հանգամանքներից ելնելով, անգամ եթե, գործարքը կատարվում է ոչ լավագույն գնով, դա ամենևին էլ չի նշանակում Պատվերի հնարավոր լավագույն պայմաններով կատարման պարտավորության խախտում:

4.4. Հաճախորդների կողմից ներկայացված Պատվերները Բանկի հայեցողությամբ կարող են համախմբվել Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ հաճախորդների կողմից ներկայացված Պատվերների հետ՝ միաժամանակ պահպանելով սույն Ընթացակարգի դրույթները: Բանկն իրականացնում է սույն կետում նշված գործողությունները միայն այն դեպքում, երբ վերջինիս հիմնավոր կարծիքով այդ գործողությունների իրականացումը բխում է Հաճախորդների շահերից: Մասնավորապես՝ իրականացված համախմբման արդյունքում հնարավոր է Պատվերների կատարում Պատվերում նշված գնից ավելի ցածր (բարձր) գնով, քան այն հնարավոր կլիներ կատարել, եթե չիրականացվեր վերոնշյալ համախմբումը:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն Ընթացակարգը տրամադրվում է Բանկի հաճախորդներին վերջիններիս պահանջով:

5.2. Սույն Ընթացակարգի դրույթները ենթակա են պարտադիր պահպանման ներդրումային ծառայությունների մատուցման մեջ ներգրավված Բանկի բոլոր աշխատակիցների համար:

5.3. Սույն Ընթացակարգի 4.1.1. կետը ուժի մեջ է մտնում համապատասխան ֆոնդային բորսային անդամակցելու պահից:

5.4. Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերները ենթակա են պարտադիր համարակալման ըստ հերթական համարի:

5.5. Բանկը Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համաձայն վարում է ստացված և կատարված Պատվերների գրանցամատյան, որում գրանցված տեղեկությունները պահպանվում են առնվազն յոթ տարի: